ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

Նոյեմբերի 29-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմում տեղի ունեցավ ձեռնարկությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների ու կուսկազմակերպությունների քարտուղարների, մասնայական ինֆորմացիայի միջոցների ներկայացուցիչների խորհրդակցություն: Խորհրդակցությունում հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը, որը ներկաներին մանրամասնորեն տեղեկացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքի արդյունքների մասին, որտեղ քննարկվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրության կարգավորման միջոցառումների հարցը:

Խորհրդակցությունում սուր սկզբունքային խոսակցություն տեղի ունեցավ, որի ընթացքում մի շարք ընկերներ իրենց տեսակետն արտահայտեցին այդ հարցի առթիվ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած որոշման կապակցությամբ:

Խորհրդակցության մասնակիցները պաշտպանեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշումը ս. թ. նոյեմբերի 30-ին շարունակելու հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքը և այնտեղ քննարկելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրության կարգավորման միջոցառումների մասին հարցի քննարկման արդյունքների վերաբերյալ ինֆորմացիան:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամներն ու անդամության թեկնածուները:

(Արմենպրես)